Սոս Խաչիկյան, *տ. գ. թ., դոցենտ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հիմնաբառեր – սոցիալական կապիտալ, տարածքային տնտեսություն, ձեռնարկատիրություն, նորարարություն, քաղաքացիական կրթություն

Տարածքային տնտեսությունների զարգացման դերն ու նշանակությունը հասարակական կյանքում և հանրային կառավարման համակարգում աստիճանաբար դառնում է ավելի մեծ: Դա պայմանավորված է թերևս այն հանգամանքով, որ զարգացած տնտեսական կենտրոնների և թույլ զարգացած տարածքների միջև փոխհարաբերություններն այժմյան գլոբալ տնտեսության պայմաններում պահանջում են առավել համակարգված գործողություններ, որի համար տարածքային տնտեսությունները պետք է ապահովեն համապատասխան չափանիշներ: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում պետության հանրային կառավարման համակարգում տնտեսության տարածքային զարգացումը դնել ավելի բարձր մակարդակի վրա: Մյուս կողմից, ակնհայտ է, որ նույնիսկ գլոբալ տնտեսության պայմաններում որոշակի տարածքում գտնվող տնտեսական սուբյեկտները փոխհարաբերություններ են ձևավորում հիմնականում միմյանց միջև: Այդ հարաբերությունների հիմքում գտնվում են ոչ միայն տնտեսական կամ աշխարհագրական, այլև մարդկային և սոցիալական գործոններ: Այսինքն՝ տնտեսական հարաբերությունների հիմքում տնտեսական գործոններից բացի կարևոր նշանակություն ունեն մարդկանցով պայմանավորված փոխհարաբերություններ՝ հիմնված որոշակի արժեհամակարգերի վրա: Իսկ տարբեր տարածքներում քանի որ գործում են տարբեր արժեհամակարգեր, ապա որոշակի տարածքի զարգացման համար կարևոր նշանակություն է ստանում սոցիալական կապիտալի դերը:

Սոցիալական կապիտալի բնորոշումները բազմաթիվ են, որոնցից սույն հոդվածի շրջանակներում առանձնացվել են երկուսը: Առաջին բնորոշման համաձայն, սոցիալական կապիտալը դա իրական կամ պատկերացումների վրա հիմնված ռեսուրսների ամբողջություն է, որը դրսևորվում է անհատի կամ խմբի կողմից, փոխադարձ ճանաչողության հիման վրա ինստիտուցիոնալացված հարաբերությունների արդյունքում՝ հիմնարար արժանիքների տիրապետման միջո-

ցով[1]: Ըստ էության այս բնորոշման հիմքում դրված է մարդկային գործոնը՝ խմբի կամ անհատի գործունեություն, փոխադարձ ճանաչողություն և արժեքային համակարգ, որոնք բնութագրական կարող են լինել հատկապես որոշակի տարածքի խմբերի, կազմակերպությունների կամ ինստիտուցիոնալ միավորների համար:

Սոցիալական կապիտալի հաջորդ բնորոշումը սահմանվում է նրա գործառույթների միջոցով, ըստ որի այն տարբեր կառուցվածքային միավորների ամբողջություն է՝ երկու հիմնական բաղադրիչների նմանությամբ. նրանք բոլորը բաղկացած են սոցիալական կառուցվածքային միավորների որոշակի ասպեկտներից և դյուրացնում են կառուցվածքային միավորների առանձին գործողություններ ամբողջ կառուցվածքի մեջ[2]: Այս դեպքում շեշտադրում է կատարվում ոչ թե անհատի, այլ կառուցվածքային միավորի վրա՝ սակայն այդ միավորը պետք է լինի որևէ համակարգի մաս, փոխազդեցության մեջ մտնելով համակարգի այլ տարրերի հետ: Սոցիալական կապիտալի այս բնորոշումը նույնպես, ինչպես առաջին սահմանման դեպքում, առավել բնութագրական է որոշակի տարածքի համար: Այսինքն անկախ այն հանգամանքից, թե սոցիալական կապիտալն ինչ ձևով է բնութագրվում՝ անհատի թե կառուցվածքային միավորի տեսանկյունից, այնուամենայնիվ այն դրսևորվում է որոշակի տարածքում և կարող է ազդեցություն ունենալ տվյալ տարածքի տնտեսական զարգացման վրա:

Բազմաթիվ հետազոտողներ նշել են, որ տարածքային տնտեսությունների զարգացման[3] հիմնական պայմաններից մեկը մրցունակությունն է[4]: Դա բնորոշ է տնտեսության զարգացման բոլոր ոլորտներին, սակայն տարածքային տնտեսության մեջ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տարածքային շուկաներում սպառումը սահմանափակ է, իսկ այլ շուկաներ մուտք ունենալու համար պահանջվում են լրացուցիչ ռեսուրսներ, որոնք սակայն բարձրացնում են ապրանքի արժեքը և նվազեցնում մրցակցային առավելությունները: Իսկ ինչպես կարող են զարգացման կենտրոններից հեռու տարածքային տնտեսությունները բարելավել իրենց

---

[1] Bourdieu, P. and L. Wacquant (1992), An Invitation to Reflexive Sociology, The University of Chicago Press, Chicago, IL, p. 119

[2] Coleman, J.S. (1988), Social Capital in the Creation of Human Capital, American Journal of Sociology XCIV, p. 98

[3] Ohme, K (1995), The End of the Nation State: The Rise of Regional Economies, Free Press, New York

[4] Porter, M.E. (1990), The Competitive Advantage of the Nations, MacMillan, New York

մրցակցային դիրքերը: Տնտեսական հարաբերությունների այսօրվա պայմաններում տարածքային տնտեսությունների համար մրցակցային առավել նպաստավոր հնարավորություններ կարող է ապահովել մարդկային կապիտալը: Հասկանալի է, որ զարգացման առավել բարձր մակարդակ ունեցող կենտրոնները նույնպես կարող են մրցակցային գործոն դիտարկել մարդկային կապիտալին, սակայն այդ ռեսուրսների առանձնահատկությունն այն է, որ բնութագրվում է արժեհամակարգային այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ գիտելիքը, կրթությունը, վստահությունը և միջանձնային հարաբերությունները: Պետք է նշել, որ այս գործոնները հանդիսանում են սոցիալական կապիտալի կարևոր բաղադրիչներ և տարածքային տնտեսությունների զարգացման հնարավորությունների դիտարկումը սոցիալական կապիտալի միջոցով նշանակում է ներդնել ձեռնարկատիրական հարաբերությունների նոր՝ մարդկային գործոնով պայմանավորված մոտեցումներ, որոնք կարող են բնորոշ լինել տվյալ տարածքին: Եթե տվյալ տարածքում կան զարգացած հասարակական կազմակերպություններ, հետազոտական կենտրոններ, ակտիվ և նախաձեռնող համայնքներ, ապա դրանց մարդկային ներուժը, որոնք ներկայացնում են տվյալ տարածքի սոցիալական կապիտալը, կհանդիսանա տվյալ տարածքի մրցակցային առավերություն ձեռնարկատիրական նոր հարաբերություններում:

Ինչպես արդեն նշվեց, սոցիալական կապիտալի կարևոր բնութագրիչներ են հանդիսանում գիտելիքը և կրթությունը: Դա նշանակում է, որ ձեռնարկատիրական նոր հարաբերությունների արտադրող և սպառող սուբյեկտներ են հանդիսանում մի կողմից մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատուժը, մյուս կողմից քաղաքացիական կրթության բարձր մակարդակ ունեցող անհատը: Այս հատկանիշները բնութագրական են քաղաքացիական հասարակության համար, հետևաբար որևէ տարածքի զարգացած քաղաքացիական հասարակությունը կարևոր պայման է մրցակցության ապահովման տեսանկյունից:

Սոցիալական կապիտալով բնութագրվող ձեռնարկատիրական հարաբերությունների զարգացումը կարող է ապահովել արդյունավետություն երկու ուղղություններով.

1. զբաղվածության մեծացում, որն ունի սոցիալական ազդեցություն,
2. արտադրողականության աճ, որն ունի տնտեսական ազդեցություն:

Երկու դեպքում էլ սոցիալական կապիտալն ունի նորարարական նշանակություն՝ առաջին դեպքում բարձր որակավորում ունե-

ցող աշխատուժի, երկրորդ դեպքում սպառողական բարձր հատկանիշներ ունեցող արտադրանքի տեսքով: Ըստ էության գիտակրթական բարձր մակարդակ ունեցող սոցիալական կապիտալն ապահովում է նորարարական բնութագրիչներով արտահայտված արտադրանք, որի մրցունակությունը շուկայում ավելի մեծ է: Սակայն պետք է նշել, որ քաղաքականություն մշակողները տարածքային տնտեսությունների զարգացման համատեքստում հաճախ շեշտադրում են կատարում վերոնշյալ ուղղություններից առաջինի վրա, քանի որ զբաղվածության մեծացումը, եթե նույնիսկ դա չի ապահովում տնտեսական մեծ արդյունավետություն, նպաստում է սոցիալական խնդիրների լուծմանը, որը տարածքներում ավելի բարդ խնդիր է, քան զարգացած կենտրոններում: Այսինքն՝ տարածքային տնտեսություններում զբաղվածության մեծացման դեպքում ավելի է կարևորվում միջանձնային հարաբերությունները, որը սոցիալական կապիտալի արժեհամակարգային կարևոր բաղադրիչ է:

Կառավարման և սոցիալական կապիտալի փոխկապվածության վերաբերյալ բազմաթիվ հեղինակներ[5] արտահայտվել են ի օգուտ տնտեսական և ժողովրդավարական կառավարման բարձր արդյունավետության, որը հիմնված է միջանձնային վստահության[6] և քաղաքացիական հասարակության[7] չափանիշների վրա: Վստահության ձևավորումը և իրավունքների ու պատասխանատվության շրջանակների հստակ տարանջատումը կարող է ձևավորել այնպիսի սոցիալական միջավայր, որը կապահովի բարձր մրցունակություն: Կառուցելով վստահություն և փոխհամաձայնեցված կերպով տարանջատելով սեփականության իրավունքը, կստեղծվեն այնպիսի չափանիշներ, որոնք կարժևորվեն տնտեսական գործակալների կողմից – չափանիշներ որոնք հանդիսանում են կարևոր գործոններ ապրանքների, ծառայության և աշխատուժի փոխանակման համար[8]:

Մեր հանրապետությունում տարածքային տնտեսությունների զարգացումը գտնվում է առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում: Սոցիալական կապիտալի տեսանկյունից մարզերի

---

[5] Karlsson, Charlie (2012), Entrepreneurship, Social Capital, Governance and Regional Economic Development, CSIR electronic working paper series, Paper No. 2012/6, p. 6

[6] Westlund, H. (2006), Social Capital in the Knowledge Economy: Theory and Empirics, Springer, Berlin

[7] Nahapiet, J and S. Ghosal (1998), Social Capital, Intellectual Advantage and the Organizational Advantage, The Academy of Management Review 23, 242-266

[8] Miller, G (1992), Managerial Dilemmas: The Political Economy of Hierarchy, Cambridge University Press, New York

ներուժի մեծացումը կարող է լինել այն կարևոր գործոններից մեկը, որի արդյունքում մարզերում գործող տնտեսական սուբյեկտները կարող են ապահովել գործունեության բարձր արդյունավետություն: Այսօր կան հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև ակտիվ նախաձեռնող խմբեր և համայնքներ, որոնք ներկայացնում են սոցիալական առանձին կառուցվածքային միավորներ և պատրաստ են ընդգրկվելու նորարարական սկզբունքներով կառավարվող ձեռնարկատիրական հարաբերությունների մեջ: Սոցիալական ձեռնարկատիրությունը այն հիմնական ուղղություններից է, որի զարգացումը ՀՀ մարզերում հնարավոր է իրականացնել, հիմնվելով սոցիալական կապիտալի վրա: Ձեռնարկատիրական այսպիսի հարաբերությունների հիմքում ընկած է այն գաղափարը, որ ձեռնարկատիրության արդյունքում ստացվող շահութը նպատակաուղվում է տվյալ սոցիալական խմբի՝ այլ ոչ թե առանձին անդամների, շահերի սպասարկմանը:

ANNOTATION

Sos Khachikyan
PhD, Associate Professor

THE ROLE OF SOCIAL CAPITAL IN REGIONAL ECONOMIC DEVELOPMENT

Key words – social capital, regional economy, entrepreneurship, innovation, civic education

Obviously, even in present conditions of global economy the economic agents of a region establish relationship generally between each other. These relationships based not only economic or geographical, but also in human and social factors: which represent social capital. As in different regions existing different virtues, the role of social capital becoming important for development of a region.

In the present conditions of economic relations the human capital could provide the opportunity of more competitiveness for regional economic development. If there are developed non-governmental organizations, research centers, active and engaged communities in a region, then those human resources: which forms social capital of the region – will be more competitive in new entrepreneurship relations.Social entrepreneurship and innovations in economic relations will be key factors of the development of regional economy in RA.

АННОТАЦИЯ

Сос Хачикян
к. э. н, доцент

РОЛЬ СОЦИАЛЬНОГО КАПИТАЛА В ДЕЛЕ РЕГИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Ключевые слова – *социальный капитал, региональная экономика, предпринимательство, инновация, гражданское образование*

В настоящее время стало очевидным, что даже в ныне существующих условиях глобальной экономики находящиеся в определенном регионе экономичекие субъекты в основном формируют отношения между собой. В основе этих отношений лежат не только экономиические или географические, но и человеческие и социальные факторы. А так как в разных регионах функционируют разные системы ценностей, то для развития определенного региона важное значение приобретает роль социального капитала.

В нынешних условиях экономических отношений для региональных экономик более благоприятные условия может обеспечить человеческий капитал. Если в данном регионе имеются развитые общественные организации, исследовательские центры, активные и инициативные общины, то их человеческий потенциал, который является социальным капиталом данного региона, в новых предпринимательских отношениях даст данному региону конкуретные преимущества. Социальное предпринимательство и инновации в экономических отношениях могут стать важными факторами регионального развития экономики РА.